Ծրագիրը ֆինանսավորվում է
Եվրամիության կողմից

Covenant of Mayors
for Climate & Energy
CoM East

ՔԱՂԱՔԱՊԵՏԵՐԻ ԴԱՇՆԱԳՐԻՆ ՄԻԱՆԱԼՈՒ ՁԵՎ

Ես, Երևանի քաղաքապետ Հայկ Մարությանս, Երևանի ավագանու 2021թ. ապրիլի 20-ի թիվ 368-Ա որոշմամբ լիազորված եմ ստորագրել **Կլիմայի և էներգիայի վերաբերյալ Քաղաքապետերի դաշնագիրը՝** լիովին գիտակցելով Պարտավորությունների փաստաթղթում սահմանված և ստորև ամփոփված պարտավորությունները.

Սույնով Երևան համայնքի տեղական ինքնակառավարման մարմինը պարտավորվում է՝

- Նվազեցնել CO_2 (և, հնարավորության դեպքում, ջերմոցային այլ գազերի) արտանետումները համայնքի տարածքում առնվազն 30%-ով մինչև 2030թ., մասնավորապես՝ էներգաարդյունավետության բարձրացման և վերականգնվող էներգետիկ ռեսուրսների ավելի լայնածավալ կիրառման միջոցով,
- Բարձրացնել դիմակայությունը կլիմայի փոփոխության հանդեպ՝ հարմարվողականության միջոցով:

Ստանձնած պարտավորությունները գործողությունների վերածելու նպատակով, Երևան համայնքի տեղական ինքնակառավարման մարմինը պարտավորվում է քայլ առ քայլ կիրառել հետևյալ մոտեցումները.

- Իրականացնել **Ելակետային արտանետումների գույքագրում** և **Կլիմայի փոփոխության ռիսկերի և խոցելիության գնահատում**,
- Ներկայացնել **Կայուն էներգետիկ զարգացման և կլիմայի պահպանման գործողությունների ծրագիր**՝ համայնքի Ավագանու վերը հիշատակված որոշման ընդունման օրից երկու տարվա ընթացքում և ներառել **կլիմայի փոփոխության մեղմման և հարմարվողականության գաղափարները** համապատասխան քաղաքականություններում, ռազմավարություններում և ծրագրերում,
- **Ներկայացնել առաջընթացի հաշվետվություն** Կայուն էներգետիկ զարգացման և կլիմայի պահպանման գործողության ծրագրի ներկայացման պահից սկսած առնվազն յուրաքանչյուր երկու տարին մեկ անգամ՝ գնահատման, մոնիտորինգի և ստուգման նպատակով,
- **Կիսվել** մեր մոտեցումներով, արդյունքներով, փորձով և գիտելիքներով Եվրամիության սահմաններում և Եվրամիության սահմաններից դուրս գործընկեր տեղական և մարզային իշխանությունների հետ՝ ուղղակի համագործակցության և անաչառ գործընկերության միջոցով:

Ես ընդունում եմ, որ Երևան համայնքի տեղական ինքանկառավարման մարմինի մասնակցությունը տվյալ նախաձեռնությունում կարող է դադարեցվել՝ Քաղաքապետերի դաշնագիր ծրագրի Արևելք գրասենյակի կողմից նախապես գրավոր տեղեկացմամբ՝ վերը հիշատակված փաստաթղթերի (օրինակ՝ Կայուն էներգետիկ զարգացման և կլիմայի պահպանման գործողության ծրագիր և Առաջընթացի հաշվետվության) սահմանված ժամկետներում չներկայացման դեպքում:

Երևանի քաղաքապետարան, Արգիշտի փող. 1, Երևան 0015, ՀՀ

Հայկ Մարության, mayor@yerevan.am, +374 11 514200

Ստորագրություն

ՀԱՅԿ ՄԱՐՈՒԹՅԱՆ
Երևանի քաղաքապետ

EU4Energy

Covenant of Mayors
for Climate & Energy
CoM East

COVENANT OF MAYORS ADHESION FORM

I, **Hayk Marutyan, Mayor of Yerevan** have been mandated by the Decision of the Yerevan City Council of Elders No. 368-A from April 20, 2021 to sign up to the **Covenant of Mayors for Climate and Energy**, in full knowledge of the commitments set out in the official Commitment Document and summarised below.

Therefore, my local authority principally commits to:

- Reducing CO_2 (and possibly other greenhouse gas) emissions on its territory by at least 30% by 2030, namely through improved energy efficiency and greater use of renewable energy sources;
- Increasing its resilience by adapting to the impacts of climate change.

In order to translate these commitments into action, my local authority undertakes to fulfil the following step-by-step approach:

- Carry out a **Baseline Emissions Inventory** and a **Climate Change Risk and Vulnerability Assessment**;
- Submit a **Sustainable Energy and Climate Action Plan** within two years following the above date of the municipal council decision and **mainstreaming mitigation and adaptation considerations** into relevant policies, strategies and plans
- **Report progress** at least every second year following the submission of the Sustainable Energy and Climate Action Plan for evaluation, monitoring and verification purposes;
- **Sharing our vision**, results, experience and know-how with fellow local and regional authorities within the EU and beyond through direct cooperation and peer-to-peer exchange.

I accept that my local authority shall be suspended from the initiative – subject to prior notice in writing by the Covenant of Mayors - East Office – in case of non-submission of the above-mentioned documents (i.e. Sustainable Energy and Climate Action Plan and Progress Reports) within the established deadlines.

Yerevan Municipality, Argishti Street 1, Yerevan 0015, Republic of Armenia

Hayk Marutyan, mayor@yerevan.am, +374 11 514200

(Signature)

HAYK MARUTYAN
MAYOR OF YEREVAN